Շնորհավորանք – թերթ, «Շողակն», ապրիլ, Բ, թիվ 8, 2003

Մեծարգո Արամ Իսաբեկյան, սիրով հայտնում ենք մեր ուրախության անկեղծ զգացումը Ձեզ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորի պատասխանատու պաշտոնում վերընտրվելու առթիվ: Ձեր ռեկտորության տարիներին բուհական այդ անվանի հաստատությունը մնաց ավանդական իր բարձունքին:

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ ցանկալով, որ այսուհետ ևս բարեգութ Աստծո առաջնորդությամբ Գեղարվեստի ակադեմիան պահեք-պահպանեք պատշաճ բարձունքի վրա՝ առավելագույնս նպաստելով 21-րդ դարի հայ արվեստագետ գեղագետի բարոյական և իմացական մակարդակի բարձրացմանը: